

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան 12 Թր.

Վեցամսեայ 6 Թր.

ԱՐՏԱՍԱՀԱՆԱՆ

Երկու քիւր միկ ծարով

Տարեկան . . . 14 Թր.

Վեցամսեայ . . 7 Թր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոյար

Վեցամսեայ 1.50 »

Կ Ա Ն Ի Կ

Մակնոցման սուղը
20 ամսեայ

ՀԱՍՅԷ

Rédaction du journal

"Ipravunk"

VARNA (Bulgarie)


Редакция

на вѣстникъ

"Иравунк"

ВАРНА

Կրօնքոչիւնք եւ յին
տրուիր



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Վ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇՆՐԱԹ

ԾԱՅՐԱՅԵՂՆԵՐԸ

Հոկտ. 17 ին հրատարակուած Ձարին մանիֆէսթը որչափ ծայրայեղ յեղափոխականներու խնդրութիւն կոչուելու արժանի անհամբերութիւնը նոյնչափ ալ յետադիմական պետական մարդոց գաղափարին վայրագութիւնը հրապարակ հանեց :

Այդ երկու ծայրայեղ կողմերը իմէ մի քիչ ժողովուրդի անմեղ արիւնը խնայող ըլլալին, հոկտ. 17 էն անմիջապէս յետոյ ոչ յեղափոխականաց խնդրութիւնները տեղի կունենային և ոչ յետադիմականներէ պատրաստուած խուլիգաններու վայրագութիւնները կը գործուէին որոնք այնչափ սուղի նստան մանաւանդ կալկատի մէջ :

Ի՞նչ բանով կրնան արգարանար օրինակ, Պապուի մէջ գըլ խաւորապէս հայ յեղափոխականներէ առաջնորդուած ամբոխին կարմիր դրօշակներով փողոցները պտտելէ, կառավարչին ապարանքին առջեւ ցոյց ընելով կարգ մը պահանջներ առաջարկելէ վերջ, ելլել երթալ բանտին վրայ յարձակելը, մանաւանդ այն կիծու եւ յեղափոխութիւնները Ձարին դէմ, զինուորին դէմ, պաշտօնեան դէմ : Այդ ամենը կրնար կառուցել արդէն կատարելու վրայ եղող հազիւ զսպուած պաշտօնեան, խաղախը, մուրեւանդ, կղերը ու գաւառապետ խուլիգանը, որ խօսք մէկ ըրած հակացոյց մը սկսէին և քարուքանդ ընէին իրենց մատնանշուած տունները, մթերանոցները, կողոպտէին ապրանքները ու գոյքերը, այրէին թանկագին չէնքերը և խողխողէին կամ գընդակահար ընէին անմեղ մարդիկ ու տղաք : Եւ այս տեսակ յարձակումէ մը շատ բնական է որ կողկասի մէջ հայը պիտի տուժէր, բնական էր նաեւ թէ՛ թուրքն ալ խուլիգանին պիտի օգնէր հայ տարրը բնանշելու համար իր

խալիֆայական ծրագիրը դործագրելու յարմար առիթը հասած համարելով :

Հետեւապէս այս բնական բայց դառն հետեւանքները կանխատեսելով, զգոյշ վարժուեալ մը պէտք էր ունենալ ամբողջ կողկասի հայ տարրը հոկտ. 17 ի մանիֆէսթէն յետոյ, ինչպէս որ այդ նախադրուածութիւնը ունեցող քաղաքներու հայերը գրեթէ երբէք չեն մնասուած յետադիմականներու հակացոյցներէն, և թուրքերը, առիթ չեն ունեցած այդ միջոցաւ հայերէն իրենց վրէժը լուծել ելլելու :

Եւ ի՞նչ ըսել ուստի սոսիալ-դեմոկրատներու հայերու դէմ գործածել սկսած կիծու լեզուին :

Դրօշակ մատմար առնող պատասխանելու առիթը (թէ և ալ աւելի դաշնակցական գործունէութիւնը ցուցադրելու մտահոգութեամբ) քանի մը նախադասութիւններ արտասպաժ է ուստի սոսիալիսթներու օնկան ներքէն :

Ահա ատոնցմէ կտոր մը .
Ռուսները յուսն են քիչ տակ հայհոյում են հայերին, որպէս ամբողջ խոտովութեան հեղինակներին : Բանաւորական յայն մասսաները, ճնշուած անպարտութիւնից ու սպառնացող սովից, փնտռում են մեղաւորին և ակամայ փնտռում են նրան մօտիկում . . .

Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում թագաւոր կոտորածի օրերում իրենց լոյց տալ կարողացան միմիայն նախնայական Դրօշակները, հաստատում է իմ կարծիքով միայն այն՝ որ կառավարութեան տաքսիլը—զրուգոն մի ազգութիւն միւսի դէմ—ստիճութեամբ պիտի առաջ գնայ, քանի զի կողմակցութիւն ունենալով անպարտութիւնը քաղաքական նշանակութիւն եւ հայերին աւելի կտար, քան թէ կարող են տալ հարկւորութեան լաւ վերած գրօնակներ . . .

Ի՞նչ կըսէք. ընկերավարութեան անձնատուր ըլլալով երթալ ուստի

սոսիալիսթներուն հետ միանալ (ինչպէս հին—հնչակեանները), կամ ընկերավարականներու գինիովը գինովնալ ու անոնց պոչէն չը զատուել զանոնք անկեղծ եղբայրներ կոչելով, բայց երբ կարգը գալ եղբայրութեան ապացոյցը տալու, երբ ուստի խուլիգանը և թուրք համիլայմականը թելադրուած ընկերավարութեան թշնամիներէն յարձակին հայոց թաղերը կողոպտելով այրելու և հայալքատուր կոտորելու, ուստի ընկերավարականը իբր անկեղծ եղբայր (!) ոչ թէ միայն պարզ հանդիսատես կը մնայ, այլ իր կարգին «անգործ և անօթի ըլլալու» պատրուակաւ ինքն ալ հայ թաղերուն վրայ կը յարձակի, թէ կը կողոպտէ, թէ կայրէ և թէ կը սպաննէ :

Այս խոստովանութիւնը կընէ ուստի ընկերավարականներու օնկանը, և լրբօրէն իր երեւակայած Հայալքաբանական (!) յեղափոխութեան դաշնակցականներու խուլիգանութեան պատիժը ամբողջ հայ ժողովուրդին կրել տալու անխղճութիւնը կունենայ :

ԿՈՎԿԱՍԻ ԴԵՊՏԵՐԸ

Պապուի Նոր-Դարի կը գրեն .
«Բագուի հայոց աները կրակելուց եւ թալանելուց առաջ մի թուրք, սպայի չոր հագած, պիստալ ժողովուրդի հետ շրջում էր ուստի թուրք բնակիչներին եւ հուսիսներուն հետեւալ այդ անկարգ, ուրվճանաւ հայոց ջարդ է սպասուում : Այդպէս էլ լինում է ի հարկէ » :

Թարթառ կայսրանէն կը գրեն թէ. զինուորական հրամանատար Նաւալովի իր խաղաղարար կարգած Նաւալովի զէնքերը որ իսլամ դիպուրները պիտի հանդարտեցնէր, աւելի գրգռած եւ սոսկալի վայրագութիւններ գործել տուած է հայ գիւղացիներու դէմ. բացի աշխարհականներէն, Եսայի քէն. Շահիջանեանը ձիու պոչին կապելով 70 վերստ քաշել տուած է : Այդ Ատի-

կի դէլ-բէկը օգոստոսի կոտորածէն յետոյ Տիգրիս երթալով շուշեցի Գ. Ի-ի տունը հիւրասիրուած եւ անկէ 7000 ռուպլի զրամ առած է, որպէսզի այդ զուգարով զէնք հայթայթէ : Իրօք այդ զրամով զէնք առած է եւ Ջիւանչիլի գաւառը փութալով զէնքերը բաժնած է ջանքեղար ներու խուճրերուն, հայոց դէմ գործածելու համար : Վերջապէս ուստի զօրավար Նաւալովի իր խաղաղարար կարգած այդ Ատիկի-դէլ-բէկ Աւալ-կի-դէկովի հայոց հասցուցած չարիքը անկարագրելի եղած է :

Անոր շնորհիւ այժմ Թարթառ կայսրանին մէջ 75 է աւելի հայ բանտարկեալներ կան որոնց մէկ քանին քահանաներ են : Նամակագիրը կը մանրամասնէ կարգ մը կեղեքուած հայերու անուններ եւ կը մատնանշէ ջանքեղար կոչուած թուրք խմբապետներ իրենց անունն ովք որոնք ամեն ոճիր գործելով հանգիստ ազատ կը մնան, ցարդ :

Տիգրիսի ուստի սոսիալ-դեմոկրատ կուսակցութեան նախաձեռնութեամբ միթինկ մը գումարուելով, ուսերէն, վրացիներ, հայերէն եւ թուրքերէն լեզուներով ճառեր խօսուած են : Դուրիայի յեղափոխութիւնը ուր վրացիք ապստամբած են զսպելու համար կառավարութեան զօրք զրուկելուն դէմ թողած ճառեր տրտաւանուած են, եւ որոշում տրուած է կառավարութեանէն պահանջելու որ ետ կանչէ Գուրիա զըրկած զօրքը անոր ընդհանուր ապրտամբութիւն սպաննալով :

Նոյն միթինկի երկրորդ օրոշումն եղած է սա . « Ի նկատի առնելով որ հոկտեմբերի 17-ի մանիֆէստից յետոյ բարձրացրել են կոլիւնները յետադիմական բոյր ոյժերը, որոնք ձգտում են հակայեղափոխութեամբ վերագործնել ինքն-կալական ուժի մը եւ այդ նպատակով խուլիգանների խմբեր են կազմակերպում, ջարդեր են յարուցանում եւ զրգոտում են գրեհիկ ամբողջ յեղափոխական շարժման եւ մի ազգ մի սի դէմ, — միտնալ անհրաժեշտ է համարում ետանդապէս կոտորել այդ հակայեղափոխութեան դէմ, արդէն ձեռք բերած ազատութիւնն աջողութեամբ իրականացնելու եւ յետագայ կողմի ճանապարհը հարթելու համար : Այս նպատակով միախնդր սնհրաժեշտ է համարում . 1) պահանջել կառավարութիւնից անյապաղ պաշտօնանկ անել եւ դատի յանձնել բոլոր հին վարչապետներին, իբրեւ հակայեղա-

բանտի առաջ՝

Գրիգոր Սարգսեանց, Տիգրան Մարգարեանց, Դաւիթ Մանուկեանց, Անտոն Աւանակեանց, Ռուբէն Տէր-Օհանեանց, Յովսէփ Գէորգեանց, Նիկողայոս Զաքարեանց, Նիկողայոս Յակոբեանց, Ն. Մալխասեանց, Մելքոն Արշակեանց եւ Ս. Զաւարճեանց : Բացի դրանցից, որ հայեր են, կան ռուսներէց, հրէաներէց եւ վրացիներէց 10-ը հոգի, իսկ թուրքերէց 8 հոգի :

—21 հոկտ. խանութները փակ են, ոչ մի հայ քաղաքում չի երևում. կարծեցի՞ք Սաղաթէլիանի տան ուղարկած թնամբ ամեն ինչ վերջացաւ. սակայն, ինչպէս երեւում է, չարիքն անվերջ է... Ռուս խուլիգանները, թուրք խուլիգաններն առաջնորդութեամբ, «կորչին հայերն ու հրէաները» գոռալով մտան Նիկոլայեւսկայա փողոցը եւ կանգ առան ծխախոտի գործարանատէր եղբ. Միրզաբէկեանցներին սեփական տան առաջ : Մի ռուս բարձրանալով մարդկանց ուսերի վրայ ճառ խօսեց. թուրքները փափսացին. լուռեց առաջնակին ձայն, մարդիկ աջ ու ձախ ցրուեցին : Թուրքները ռուսերէն բղաւեցին. « Միրզաբէկեանցը կրակ արեց, հայ է, կորչի » : Այլ եւս թնամբներ չսպասուեց. մի կողմից կազակներն սկսեցին զնգակի տարափ տեղալ տան վրայ, միւս կողմից թուրքները նախ անել զոռներին վրայ ու հրդեհել :

Միրզաբէկեանի տանը ոչ մի հայ ապրող չի կար, հայերի մի մասը փետրուարի, միւս մասն օգոստոսի արեւնոտ օրերին հեռացել էին, ապրողներն ռուսներ, վրացիներ եւ հրդեհների էին : Փորձեց պատշգամբ դուրս գալ վրացի իշխան Զորձան (չէ՞) սակայն կարկտի պէս թափուող զնգակները թոյլ չտուին ներան իւր ասեղիքն ասել : Որպէսզի Միրզաբէկեանները չկարողանան ապաստանել հրդեհից (չէ՞ որ թուրքներն «աջ» ունին), իսկոյն հրդեհեցին նաեւ հարեւան Պողոսեանի հարկեր հազարի արժէք ունեցող տունը, ապա այրեցին ձախ կողմի այրի տիկ. Շահգիրդեանների տունը միայն կիսով չափ, որովհետեւ հարեւան տունը թուրքի էր եւ կարող էր այն էլ այրուել : Այրուող երեք տան լուսամուտներէց լուսւ էին կանանց ու երեխաների աղիողորմ ձայները, կազակների զնգակները լռեցնում էին, թող չէին տալիս բնակիչներին դուրս փախչել, ազատուել : Շատերին զինուորներն ազատեցին, իսկ աման կայքից ոչ մի մաղ :

Թուրքները զորանով չբաւականացան, ռուսներն այնուհետեւ սկսեցին այրել նոյն շարքում գտնուող Վարդանեանի, Արուսեանի, Թառայեանի (անտէր հայը իր ընտանիքով ազատուեց հարեւան թուրքերի ձեռքով, իսկ մի եղբայրն սպանուեց փողոցում), Ղուլաեանի, Ներսիսեանի, Անդրէյ Թառայեանի եւ Ակունեանի տները, բոլորն էլ 2-4 յարկանի եւ քարայէն, որոնց արժէքը մի միլիոնից աւելի է, չհաշուած տան ընկուղիները կարասիքը, որոնք, անհամեմատ մեծամասնութեամբ հայերի չէին պատկանում, որովհետեւ արեւան երկու ամիսներում [փետր. եւ օգոստ.] հայերը համարեա թէ բոլորը հեռացել էին այդ թաղից եւ այդտեղ ապրողները ռուսներ, հրէաներ ու վրացիներ էին : Նոյն օրն այրեցին

նախկին ուսուցիչ է. փերթուղաբեանի հինգյարկանի տունը :

Ասացի թէ թուրքերն այդքանով չբաւականացան. այդ ասում եմ նրա համար. որ թուրքերն էին մասնաւոր անում հայերի տները, քանի որ ռուսները չէին կարող զանազանել հայերի տները թուրքերի տներէց, մանաւանդ որ այդ ռուսներին մէջ քաղաքի տներին ծանօթ մարդ չկար, բոլորն էլ բոբիկ, պատրաստած հագուստով, մի ոտքին կոշիկ, միւս ոտքին կրկնակոշիկ հագած, առանց զլխարկի, հարած մարդիկ էին : Եթէ մէջները «կարգին» մարդիկ կային, դրանք էլ մեր քաղաքի ոտտի կանանին էին հագուստները փոխած :

Այդ հրդեհներէ ժամանակ գերեզմանատնից վերադարձող հայ քահ. Մեքրոպ խորխուռնին ընկնում է ամբոխի մէջ. վստահ լինելով որ ինքը հոգեւորական է, եւ իրեն ձեռք չեն տալ, Բայց ամբոխը յարձակւում է կոտորել վրայ, սպանում քահանային, ժամկոչին, խորագոյին եւ ննջեցեալին տիրողը, ապա զիակները թափում կրակի մէջ : Երբ իմանում են, որ կոտոր հայի է (կառապանը ռուս է լինում). կոտոր էլ են այրում :

Այնուհետեւ ամբոխն անցաւ ծովի ափը, նահանգապետի տան առաջից անցնելով, մտաւ վերիկոկնեմսեակայա փողոցը : Կազակները, ռուսներն ու թուրքերը յարձակուեցին Առաքելեան-Կաճկաճեանի մանուֆակտուրի վաճառատան վրայ, դռները ջարդեցին, բոլոր ապրանքը դուրս թափեցին, կողոպտեցին, եւ ոչ ոք չը խանգարեց նրանց. իշխանութիւնը դեռ օգնում էր : Ապա յարձակուեցին Պետրոսեանի, Աղաճարեանի եւ Արզումեանի մեծ վաճառատների վրայ եւ նոյնպէս կողոպտեցին : Բոլոր կողոպտուած ապրանքն անցաւ թուրքերի ձեռքը, որոնք, «արաղի փող» տալով ռուսներին եւ կազակներին, ապրանքը տարան կառքերի մէջ թափած : Այդ օրն այդքանով էլ վերջացաւ կողոպտան ու հրդեհը : Կան բաւական սպանուածներ ու վերաւորուածներ :

Առաջին օրուայ (հոկտ. 20-ին, Սաղաթէլիանի տունը ուղարկուեցին օրը) սպանուածները եւ վերաւորուածները հետեւեալներն են. Անդրանիկ Սարգսեան, Մատթէոս Մելքումեանց, Մարտիրոս Տէր-Գէորգեանց, Գէորգ Պողոսեանց, Մնացական Վարդապետեանց, Գրիգորեանց, Յակոբեանց եւ Սափրազեանց, Կան սպանուած 20-ից աւելի ռուսներ, վրացիներ, հրէաներ եւ թուրքեր :

[ՆՈՐ-ԴԱՐ] փերթու

ՆԱՄԱԿ ՏՄՐՈՒՆԸ

Հոկտեմբեր 1.
Ձեզ արդէն յայտնի են բոլոր Ձաւրեանի դժբաղդ արկածները : Բաւական նեղութիւններէ յետոյ նա յաջողած էր Մուշ գնալու հրամանը ձեռք բերել, բայց տարաբախտաբար, մի ամիս կարին մնալէ յետոյ, երբ կանցին Բաղէշ, որ Մուշ դայ, Մշոյ անիթիճ միւթէսարիքը հազար ու մի միլիոններ ձեռք կան ինչ եւ տակաւին նոր գործի ձեռնարկած՝ բոլորը ետ կը դառնայ զէպի Ռուսաստան : Մի քանի օր միայն մնաց Մուշ : Թէ ի՞նչ տպաւորութիւն կը թողու անոր անակնկալ

հեռանալը մեր խեղճ հայրենակիցներուն վրայ ձեզ լաւ յայտնի է : Մի յայտնի դուժար կրցաւ հասցնել Սասուն՝ սոված ժողովրդեան բաշխելու համար :

Այս միւթէսարիքը բոտ երեւոյթին ուրիշաւ է ծայրայեղ ճնշման տակ հայերին ուժաւարտ անելու կորսնցնել : Ապօրինի հարկերի հաւաքումը կը բազմապատկուի միշտ : «Գրքարտար» ամենօրեայ տւած տանջանքները չափ ու սահմանից անցել են : Արդէն ոչ մի բողոքի ու շարժումներ զարմնող չը կայ : Կառավարութիւնը Սասնոյ կարօտելոց տւած 5000 լիւրան մէն աւել քաղաքի ունեւոր դասակարգից հաւաքեց : (Ըսին խանութներին տներին ապրանքները հրապարակ հանելով եւ թիւրքաց վրայ քառորդ գնով ծախելով) : Քանի մենք երեք եղբայր էինք, կառավարութիւնը 400 դր. տուրք կը վերցնէր մենէ, իսկ այժմ, որ վաղուց երկու եղբայրներս հեռացել են եւ այստեղ մեռած կը կարծուին անոնք, կրկին ինձմէ 1100 դր. ստակ տուրք կառնէ տարեկան : Երեւակայեցէք, թէ ինչ կը լինի միաւնուած ու տանջուած դիւղացու : Վիճակը... կարգ մը հեռագրներ քաշուած են Բ. Դուռը, բայց մինչեւ ցարդ ապարդիւն :

Խաւսի աւերումէն մի քանի օր յետոյ Անդրիոյ եւ գաղիոյ քոնսլէներ աղէտի վայր գնացին. կառավարութիւնն ալ քննութիւն բացաւ եւ հրաման րուա : որ բնակիչները իրենց տեղերը դառնան : Վերոյիշեալ Սասնոյ նպատի մէկ մասն ալ անոնց տները շինելու յաւակացուց : Այժմ, գիւղը ամբողջովն հաստատուած է, սակայն հիմակ ալ սովածան կըլլան եւ շատերն ալ այս ու այն կողմը կը տարածուին՝ իրենց չոր դրութիւնը պահելու համար :

Ամսոյ 6-ին Արգաւաճ գիւղի մէջ մասնութեան շնորհիւ, Աւագորայ միւսիւր եւ Թլայ Եմինը ճարպիկութեամբ մի խումբ տղաներու կեցած տունը կը պաշարեն՝ վարդախաղի, ծղաքի եւ այլ քրդերով : Տղայք բոպիկ եւ զլխաբաց դուրս կը թռչնեն եւ անհաւասար կռիւ մը կը սկսի երկուստեք : Մեր անվիհեր քաջերը աջ ու ձախ կը թափեն Քիւրդերին 12-էն աւելի վիրաւոր եւ ըսպանւած կան քիւրդերէն, ընդ որս վիրաւորներ է նաեւ չէյա Էմինը, առանց սակայն վերջին շունչը փչելու :

Տղայք ձեռքերով այդ բաշխողութիւնների բռնակը, կաշխատին իրենց առաջնորդ Դաւութիկի Ջալալի եւ Յարթիկի հաւ դէպք լեռը քաշելու երբ յանկաթ կը նպատահին մի վաշտ նոր հասած կանոնաւոր զօրաց : Մտնըրոպէն հասած էր : Կատարի կռիւը կը շարունակուի մինչեւ արեւի մարմտնելը : Ինկած են բաւական զինուորներ եւ մի սպայ : Բայց մեր տղայք բոլորը միասին կռուելով մինչեւ վերջի փամփուշտը, ինկան այնտեղ, ընդունելով նահատակութեան անթաւաճ պսակը :

Ձեռք գիտեր, ո՞ր ցաւին դժբանք անենք, այս նեղ ժամանակին : Սեւ գլխիւ քիւրան 50 դր. է, ցորենը 100 դր. դէն եկուր ու ապրիւր : Մերի ու անտէր, անտու ժողովուրդ... կալ ու կուտը սկսեր է վերջանալ, բայց խնդիր է, թէ խեղճ գիւղացին ինչ կը տանի իւր կալ ու կուտէն իր տուն, իր սովալլուի ու թշուառ որբերուն կերակրելու : Հիմակուրէն

արդէն կը սկսին սալաֆով եւ տոկոսաւոր պարտքերով ապրել մինչեւ յառաջիկայ գարունը : Եւ ասոր համար է, որ չանցնիր մի քանի կարծ տարի, — եւ անա կալուածատէր հայ շինականը դարձած կը լինի անհող, պրոյէտարիաթ մը, ճորտ մը, գերի մը միայն չոր հացի մը համար ախաւտող եւ տառապող ուրիշի հողի վրայ : Շուտով ձմեռը յաջորդելու է այս սովատանջ վիճակին... Բոլոր թիֆլիս հասնելէ յետոյ կրկին 150 լիւրա օգնութիւն հասցրեց մեր լայնածաւալ գաւառի արկածելոց, բայց ի հարկէ, չնչին բան մըն է :

Այո, ձմեռը կը մտենայ եւ այս ձմեռը պիտի ըլլայ անելի տեղական ազգայնականութեան համար : Արհեստական սովը եւ զանազան տարափոխիկ հիւանդութիւններ այժմէն արդէն սկսել են տարածել հայ գիւղացիներին մէջ : Անցեալ տարւայ թշուառութեանց պատճառաւ տեղի ունեցած հիւանդութիւն մօտ 200 մարդ (երիտասարդ ու ծերէն) կերաւ քաղաքէն, թող գիւղացիներէն եւ Սասունցիներէն : Այս տարի մի բան աւելի է, քանի որ թշուառները կրկնապատկուած են : Պէտք է դիմել, աղաղակել, ստիպել մեր յարգելի պաշտպաններին եւ հեռաւոր սրտակից եղբայրակիցներն, որ փութան դրամական նպաստներ հասցնելու, ապա թէ ոչ Տարուբերանի հայ ժողովուրդը կորած է, այլ եւս դիմանալ անհաւար է :—Ո՞ր Յիսուս, ո՞ր ազգ, ո՞ր ժողովուրդ տարաւ այս վերջի 20 տարւայ Տարուայ հալածանքը եւ անասան մնաց : «ԴՐՕՇԱԿ»

ՏՕՔԹ. ԹԱԳՈՒՈՐԵԱՆ

ՍՕՖԻԱՅ է մեզ կը գրեն .

«Տեղւոյ հանրածանօթ հայ բոլոր Տօք. Ն. Թագուորեան որ ոսկէ ամփսու կէս առաջ քաղաքէս մեկնած էր Պերլինի եւ Բարիկի համալսամաններուն եւ բուֆէտէօրներու հիւանդանոցներուն մէջ աշխատելու նպատակաւ, վերադարձած է Սօֆիա : Այս երիտասարդ հայ բոլորը արդէն տեղւոյ օտարներուն իսկ համակրանքը գրաւած ըլլալով իր նոր ստացած գիտական պաշարներուն շնորհիւ ասկէ յետոյ ալ աւելի համակրելի պիտի դառնայ անշուշտ » :

Ա. Զ. Դ.

Անոնք որ հայերէն որ եւ է գրքեր ունին եւ կուգեն ծախել թող հաճին դիմել Հայկական Ընթերցարանի վարչութեան որ եթէ յարմար տեսնէ պիտի գնէ զանոնք :

Վարչութիւն հայկ. ընթերցարանի (Կնիթ)
Վառնա 12 նոյեմ. 1905

ՏՊԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

«ԻՐԱՌԱՆԻՔ»-ի Վարչութիւնը յորձն կառնէ ապագային հրաւիրադրեր, նամակագրութիւններ, այլ եւ այլ քարտեր, հաշուեցուցակներ, տոմսակներ, գրքոյկներ եւ այլն :

Ուրիշ քաղաքներէ ստացուած յանձնարարութիւնք կը գործադրուին փութով եւ մեծ խնամքով : Գրիները չափաւոր եւ գրամը կանխիկ :

